



**ՀԱԿԱՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՓՈՐՁԸ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՄԱՅԻՆ
ՀԱՄԱՎԱՐԱԿԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ***

ՀՏԴ 336/338

DOI: 10.52063/25792652-2023.2.17-168

ՖԻՐԴՈՒՍ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի տնտեսության
կարգավորման և միջազգային տնտեսական հարաբերությունների
ֆակուլտետի «Տնտեսագիտության տեսություն» ամբիոնի ասպիրանտ,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
Firdus.baghdasaryan@gmail.com
ORCID: 0009-0006-0828-5778

ԱՆԱՀԻՏ ԳԱՍՊԱՐՅԱՆ

Հայաստանի ամերիկյան համալսարանի
Մանուկեան Սիմոն գործարարության և տնտեսագիտության ֆակուլտետի
«Master of Science in Economics» կրթական ծրագրի մագիստրանտ,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
anahit1gasparyan@gmail.com
ORCID: 0009-0005-3057-3277

Հոդվածի նպատակն է նկարագրել հակաճգնաժամային կառավարման
ֆինանսական գործիքների կիրառությունը և դրանց արդյունավետությունը
ճգնաժամային իրավիճակների հաղթահարման գործում միջազգային և
հայաստանյան փորձի հիման վրա: Նպատակից բխում են հետևյալ
խնդիրները՝ վերլուծել հակաճգնաժամային կառավարման միջազգային
փորձը, առանձնահատկությունները, ներկայիս միտումները, ուսումնասիրել և
գնահատել հայաստանյան փորձը:

Մանրամասն անդրադարձ է կատարվել կորոնավիրուսային համավարա-
կով պայմանավորված ճգնաժամային իրադրությանը և՛ միջազգային փորձի
տեսանկյունից, և՛ Հայաստանի Հանրապետության օրինակով՝ կարևորելով
որդեգրված լուծման մեխանիզմները ինչպես ֆինանսատնտեսական, այնպես
էլ սոցիալական հարաբերությունների համատեքստում: Հետազոտության
ընթացքում կիրառվել են ընդհանուր գիտական (համադրում, վերլուծում և
ստուգում՝ հետևելով մակրոտնտեսական ցուցանիշների դինամիկային և
միտումներին), ինչպես նաև հատուկ գիտական (համեմատական-
վերլուծական) մեթոդներ:

Հոդվածում կատարված ուսումնասիրությունների արդյունքում պարզվել
է, որ կորոնավիրուսային համավարակը հաղթահարելու համար կառավա-
րությունները, տարբեր գործիքակազմերի կիրառմամբ, փորձել են

* Հոդվածը ներկայացվել է 27.05.2023թ., գրախոսվել՝ 07.06.2023թ., տպագրության
ընդունվել՝ 31.07.2023թ.:

արծագանքել ճգնաժամին և վերահսկել այն՝ չնայած ահռելի մասշտաբներին և տարածման բարձր տեմպերին: Որոշ կառավարություններ կենտրոնացել են ֆինանսական օժանդակության անհատույց ձևերի վրա, մյուսները՝ փոխհատուցվող:

Աշխարհի ֆինանսական շուկաների նման ներքին շուկաներում արծագանքը չափազանց արագ և բուռն է եղել: Համաշխարհային տնտեսության անկման համատեքստում արտաքին հատվածի բացասական զարգացումները զգալի ռիսկեր են առաջացրել ՀՀ ներքին մակրոտնտեսական միջավայրի համար, որն էլ, իր հերթին, առաջացրել է դրական սպասումների նկատմամբ անորոշության բարձր մակարդակ: ՀՀ կառավարության և Կենտրոնական բանկի վարած քաղաքականության շնորհիվ բանկային համակարգը կարողացել է պահպանել տնտեսության վարկավորման անընդհատությունը և սահունությունը:

Հիմաբառեր՝ տնտեսական ճգնաժամ, հակաճգնաժամային կառավարում, կորոնավիրուսային համավարակ, միջազգային փորձ, հայաստանյան փորձ, դրամավարկային, հարկաբյուջետային և սոցիալական միջոցառումներ:

Նախաբան

Ճգնաժամը սոցիալական կյանքի օրենք է և մտավոր լուրջ մարտահրավեր, որը պահանջում է իր ծագման, պատճառների և օրինաչափությունների վերաբերյալ լուրջ և շարունակական վերանայում և դրա առաջացրած մարտահրավերների ու տարբեր ռիսկերի չեզոքացում: Սա իրականություն է, որն առաջացել է թե՛ պատմական զարգացման բնական ընթացքով, թե՛ ներքին ու աշխարհաքաղաքական իրավիճակի մշտական փոխակերպումներով, թե՛ քաղաքական գործիչների, պետական կառույցների, բիզնեսի սխալ հաշվարկներով և հաճախ բացահայտ սադրիչ գործողություններով:

Այսպիսի մի յուրահատուկ «սթրես-թեստ» է COVID-19 կորոնավիրուսային համավարակը, որը ճգնաժամային իրավիճակների կառավարման ժամանակակից գործընթացները փորձարկելու հնարավորություն տվեց: Կորոնավիրուսի տարածումը կանխելու և բնակչության շրջանում համընդհանուր խուճապի նվազեցմանն ուղղված միջոցառումները հանգեցրին անկանխատեսելի հետևանքների ինչպես իրական տնտեսության, այնպես էլ ֆինանսական համակարգի համար: Կաթվածահարված տնտեսությունները և ֆինանսական շուկաներում տիրող չափազանց բարձր տատանողականությունը, որոնցում որոշ հատվածներ գրեթե ամբողջությամբ սառեցված էին, պահանջում էին կառավարությունների և ֆինանսական շուկայի կարգավորող մարմինների չափազանց արագ և վճռական արծագանք ինչպես գլոբալ, այնպես էլ առանձին երկրների մակարդակով:

Աշխարհի ֆինանսական շուկաների նման ներքին շուկաներում էլ քաղաքականություն մշակողների արծագանքը բավականաչափ արագ էր: Այսպես, համաշխարհային տնտեսության անկման համատեքստում արտաքին հատվածի բացասական զարգացումները զգալի ռիսկեր են առաջացրել ՀՀ ներքին մակրոտնտեսական միջավայրի համար, որն էլ, իր հերթին, առաջացրել է դրական սպասումների նկատմամբ անորոշության բարձր մակարդակ:


Covid-19 համավարակի ազդեցությունը միջազգային տնտեսության համատեքստում

Կորոնավիրուսի առաջացման և դրա վարակչության բարձր մակարդակի մասին առաջին տեղեկությունը հայտնվեց 2019 թվականի վերջին Կենտրոնական Զինաստանում՝ Ուհան քաղաքում: Թեև սկզբում թվում էր, թե համաճարակի

հետևանքով առաջացած խնդիրները կազդեն միայն Չինաստանի և ասիական որոշ երկրների վրա, սակայն 2020 թվականի սկզբին պարզ դարձավ, որ վիրուսը հնարավոր չէ վերահսկել, և մարտի 11-ին Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը հայտարարեց գլոբալ կորոնավիրուսային պանդեմիա:

Համավարակի հետևանքով առաջացած ճգնաժամը շատ առումներով բառացիորեն աննախադեպ է և՛ անհատների կյանքին անհանգստություն պատճառելու, և՛ տնտեսության իրական ու ֆինանսական հատվածների վրա ազդելու ձևով: Դրա առանձնահատկությունն այն է, որ գրեթե միաժամանակ հարված է հասցվել չափազանց մեծ թվով երկրների, որոնցում վիրուսի տարածումը կանխելու համաճարակաբանական միջոցառումների հետևանքով տնտեսական ակտիվությունը մեկ գիշերվա ընթացքում դանդաղել է, նույնիսկ որոշ գործողություններ ամբողջությամբ դադարեցվել են: Ուժեղ մակրոտնտեսական շոկը, որը ազդեցություն ունեցավ միաժամանակ և՛ առաջարկի, և՛ պահանջարկի վրա, ավելի սրեց համավարակի հետագա ընթացքը՝ առաջացնելով հսկայական անորոշություն, ինչպես նաև խուճապ, որը միախառնված էր սեփական առողջության և բարեկեցության համար վախի հետ: Այն իր ազդեցությունը ունեցավ նաև ֆինանսական շուկաների վրա՝ ռիսկեր ստեղծելով ընդհանուր ֆինանսական համակարգի կայունության վրա:

Մինչ այդ լավատեսական տնտեսական կանխատեսումները, որոնք ներկայացնում էին 2020 թվականի առաջին եռամսյակում միայն ասիական երկրներում տնտեսական աճի փոքր-ինչ դանդաղում, գրեթե մեկ գիշերում դարձան ծայրահեղ բացասական կանխատեսումներ և վերանայվեցին երկրների մեծ մասում խիստ համաճարակաբանական միջոցառումների ներդրումից հետո: Այս միջոցառումներն ուղղված էին վիրուսի տարածումը կասեցնելուն՝ նվազագույնի հասցնելով սոցիալական շփումները՝ անկախ նման մոտեցման տնտեսական արժեքից: Միայն մի քանի երկրներ, ինչպես, օրինակ, Շվեդիան, որոշում են շարունակել ապրել ինչպես նախկինում՝ առանց որոշակի գործունեության սահմանափակումների, բայց ավելի մեծ նախազգուշական միջոցների հաշվին (Belavusau and Karliuk 2020):



Գծապատկեր 1. Տնտեսական աճի ցուցանիշները՝ ըստ տարածաշրջանների (ՀՀ կենտրոնական բանկ, Ֆինանսական կայունության հաշվետվություն 2021)

Համավարակի տարածման կանխարգելման նպատակով ներդրված սահմանափակումների հետևանքով գրանցվել է համաշխարհային տնտեսության կտրուկ անկում (տարեկան փոփոխությունների տեմպերը՝ արտահայտված տոկոսով): Տարեկան արդյունքերով տնտեսական խոր անկում է արձանագրվել և՛ զարգացած, և՛ զարգացող երկրներում: Համաձայն ԱՄՅ գնահատականների՝ 2020թ. համաշխարհային տնտեսական անկումը կազմել է 3.5% (International Monetary Fund, *World Economic Outlook, October 2021*):

Հիմնականում տնտեսական զարգացումները բազմաթիվ երկրներում եղել են ոչ բարենպաստ: Մասնավորապես՝ 2020 թ. ԱՄՆ տնտեսական անկման գնահատականը 3.5% է, Եվրոգոտունը՝ 6.6%, ՌԴ-ինը՝ 3.1%

2021 թվականի հունվարի 25-29-ը Համաշխարհային տնտեսական ֆորումի համար պատրաստած զեկույցում Աշխատանքի միջազգային կազմակերպությունը (ԱՄԿ) գնահատել է, որ համավարակի ընթացքում Համաշխարհային տնտեսությունում զբաղվածների 93%-ը աշխատում էր որոշակի սահմանափակումների պայմաններում: 2020 թվականին 2019 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ կորել է համաշխարհային աշխատաժամանակի 8,8%-ը, ինչը համարժեք է 255 միլիոն լրիվ դրույքով աշխատատեղի: Ընդհանուր կորցրած աշխատանքային ժամերը 2020-ին, 2019-ի համեմատ, ամենաբարձրն էին Եվրոպայում (14,6%) և Ամերիկայում (13,7%), որտեղ կարանտիններն ու սահմանափակումները լայնածավալ էին, որին հաջորդում է ցածր եկամուտ ունեցող երկրների միջին ցուցանիշը: ԱՄԿ-ն նաև գնահատել է, որ համաշխարհային աշխատատեղերի կորուստը կազմել է 114 միլիոն աշխատատեղ (International Labor Organization):

Նման վտանգավոր դրությունը հաղթահարելու համար կառավարությունները փորձեցին արձագանքել ճգնաժամին և վերահսկել այն՝ չնայած ահռելի մաշստաբներին և տարածման բարձր տեմպերին: Սակայն տարբեր էին կառավարությունների ընտրած գործիքակազմերը: Որոշ կառավարություններ կենտրոնացել էին ֆինանսական օժանդակության անհատույց ձևերի վրա, մյուսները՝ փոխհատուցվող: Միաժամանակ ակնհայտ էր, որ վերջնարդյունքի տեսանկյունից կարևոր նշանակություն ուներ ոչ միայն հակաճգնաժամային միջոցառումների ուղղվածությունը, այլև դրանց հաջորդականությունը: Իսկապես, ճգնաժամի յուրաքանչյուր փուլում տնտեսական համակարգը պահանջում է առանձնահատուկ պետական միջամտություն՝ կախված տնտեսական գործակալների վարքագծից և սպասումներից:

Որոշ տնտեսագետներ կարծում են, թե տնտեսական համակարգերի և կառավարությունների կենսունակությունը որոշվում է ոչ թե տնտեսական «վերելքի», այլ շուկերի ժամանակ: Ուստի կարևոր է հետահայաց վերլուծության միջոցով գնահատել կառավարությունների բացթողումները և ձեռքբերումները, ինչպես նաև կատարել համեմատագրումներ և հետևություններ:

Աղյուսակ 1. Հակաճգնաժամային կառավարման որոշ արագ արձագանքներ 2020 թվականի համաշխարհային անկման ժամանակ (Peterson K and Thankom 2020)


Տեսակ	Քաղաքականություն մշակողների կողմից ընդունված արագ արձագանք	Երկրների օրինակ
Դրամավարկային քաղաքականության միջոցառումներ	Տրամադրել բանկերին կանոնակարգային մեղմացում և մայր գումարի կամ տոկոսների մարման հետաձգում COVID-19-ից տուժած պարտապաններին	Իռլանդիա, Չինաստան, Նիգերիա և Իտալիա
	Կենտրոնական բանկի իրացվելիության ապահովում ֆինանսական շուկաներում (պարտատոմսեր և բաժնետոմսեր)	Չինաստան և ԱՄՆ
	Կենտրոնական բանկերի կողմից	Ավստրալիա, ԵՄ և Կանադա

	պարտատոմսերի և արժեթղթերի գնումներ, որոնց արժեքը արագորեն նվազում էր	
	Կենտրոնական բանկերի կողմից տոկոսադրույքների իջեցում	Թուրքիա, ԱՄՆ, Նոր Չեխոսլովակիա, Ճապոնիա, Մեծ Բրիտանիա
	Վարկերի կայուն հոսք դեպի բանկեր, հանրային առողջապահության ոլորտ, անհատներ և հիմնական բիզնեսներ	Ավստրալիա, Նիգերիա, ԱՄՆ և Մեծ Բրիտանիա
Հարկաբյուջե-տային միջոցառումներ	Կառավարությունները հաստատում են խոշոր դաշնային խթանման փաթեթ՝ COVID-19 համաճարակի հետևանքով ամենաշատ տուժած ոլորտների և արդյունաբերության համար	Մեծ Բրիտանիա, ԱՄՆ, Ավստրալիա և Նիգերիա
	Ֆինանսական անձանց եկամտի աջակցության տրամադրում	Ավստրալիա, ԱՄՆ, Մեծ Բրիտանիա և Չեխոսլովակիա
	Սոցիալական ապահովության վճարներ յուրաքանչյուր տնային տնտեսության համար	Ավստրալիա, ԱՄՆ
Հանրային առողջության միջոցառումներ	Հասարակական կարանտին	Չեխոսլովակիա, ԱՄՆ, Մեծ Բրիտանիա և գրեթե բոլոր երկրները
	Սահմանային կարանտին	Լեհաստան, Վիետնամ, ԱՄՆ, Պակիստան, Կոլումբիա
	Տանը մնալու քաղաքականության հաստատում	Իտալիա, Իրան, Նիգերիա և Մեծ Բրիտանիա
	Սոցիալական հեռավորության քաղաքականություն	Հարավային Աֆրիկա, ԱՄԷ, Սինգապուր և գրեթե բոլոր երկրները
Մարդկային հսկողության միջոցառումներ	Բանտարկյալների ժամանակավոր ազատում գերբեռնված բանտերից	Իրան և ԱՄՆ
	Օդային, ցամաքային և ծովային սահմանների փակում	Թայվան, Չեխոսլովակիա, ԱՄՆ, Գերմանիա, Սերբիա և Նիգերիա
	Դպրոցների փակում	Մեծ Բրիտանիա, Իսպանիա, Իտալիա, Հարավային Աֆրիկա, Նիգերիա և ԱՄՆ
	Կորոնավիրուսի պատճառով կարանտին կիրառելու համար գինժորակների օգտագործումը	Մալայզիա, Իտալիա, ԱՄՆ, Իսրայել, Հարավային Աֆրիկա և Իսպանիա
	Ուղևորությունների արգելք	Գրեթե բոլոր երկրները
	Վիզայի մերժում և կասեցում	Հարավային Աֆրիկա, Կանադա, Սինգապուր, Չինաստան, Նիգերիա, Գանա, Զենիա, Բոլիվիա և Բրազիլիա

Քաղաքականություն մշակողները ու ֆինանսական և ապրանքային շուկայի մասնակիցները ընդհանուր առմամբ գնահատում էին, որ համաշխարհային տնտեսության վերականգնումը տեղի կունենա 2020 թվականի երրորդ եռամսյակում: Չարգացած և զարգացող երկրներում 2020 թվականի սեպտեմբերից սկսած վարակիչ դեպքերի աճը, այնուամենայնիվ, կանխատեսվող վերականգնման ավելի մեծ մասը տեղափոխեց 2021 թվական: Երրորդ եռամսյակում տարբեր ցուցանիշներ ցույց էին տալիս, որ տնտեսական ճգնաժամի վատթարագույն փուլն անցել է, թեև համաշխարհային տնտեսության վերականգնման ծավալներն ու ուժգնությունը դժվար է կանխատեսել:

Կորոնավիրուսի ավելի շատ վարակիչ շտամների ի հայտ գալը կառավարություններին դրդեց չորրորդ եռամսյակի ընթացքում կրկին կիրառել արգելափակումներ և կրճատել սոցիալական և տնտեսական գործունեությունը: Ի տարբերություն 2020 թվականի գարնանը կատարված կանխատեսումների՝ նոր կանխատեսումները ցույց էին տալիս, որ համավարակի բացասական ազդեցությունը կանխատեսվածից ավելի մեղմ է եղել, բայց հետևանքները կարող են ավելի երկար տևել և 2021, 2022 թվականներին ապահովել տնտեսական աճի ավելի դանդաղ

տեմպեր: Որպես համավարակի տնտեսական ազդեցության ցուցիչ՝ համավարակի մասին լուրերը գերակշռում էին ֆինանսական նորություններում և երբեմն շուկայի ակտիվությունը խթանող հիմնական գործոն էին: Օրինակ՝ Դոու-Ջոնսի արդյունաբերական ցուցանիշը (Dow Jones Industrial Average Index) շուկայական այլ ինդեքսների հետ միասին կորցրել է իր արժեքի մեկ երրորդը 2020 թվականի փետրվարի 14-ից մինչև 2020 թվականի մարտի 23-ն ընկած ժամանակահատվածում: Ինդեքսը կայուն աճել է մարտից նոյեմբեր ընկած ժամանակահատվածում և բարձրացել է գրեթե երեք տոկոսով: Այդպիսի հաջորդ նորությունը 09.11.2020 թ. հաղորդված COVID-19-ի դեմ պատվաստանյութի մշակումն է: Նոյեմբերի 3-ից 24-ն ընկած ժամանակահատվածում ԴՋԱ ցուցանիշը աճել է ավելի քան 9%-ով: 2020 թվականի նոյեմբերի 24-ին ԴՋԱ ցուցանիշը բաժնետոմսերի համաշխարհային շուկաների հետ միասին աճել է 1,5%-ով և առաջին անգամ հասել 30,000-ի ինդեքսային նշանոդի և գերազանցել 2020 թվականի փետրվարի 14-ին գրանցված նախորդ բարձր արժեքը՝ մինչև համաճարակի ժամանակահատվածը (Colby et al 2020):



Գծապատկեր 2. Դոու-Ջոնսի արդյունաբերական ցուցանիշ (Գծապատկերը կազմվել է հեղինակների կողմից)

Covid-19 համավարակով պայմանավորված տնտեսական ճգնաժամի հաղթահարման հայաստանյան փորձը


Կորոնավիրուսային համավարակով պայմանավորված տնտեսական ճգնաժամի առաջացման առաջին ազդանշանը Հայաստանում հայտնվեց 2020 թվականի մարտին Երևանում առաջին վարակված անձի հայտնաբերումից հետո: Համավարակի դեմ պայքարի առաջին քայլով Հայաստանի Հանրապետությունում 2020 թվականի մարտ ամսից հաստատվեց արտակարգ դրություն:

Աշխարհի ֆինանսական շուկաների նման ՀՀ ներքին շուկայում արձագանքը նույնպես բավական արագ էր կորոնավիրուսային համավարակին: Նշված գործընթացը ուղեկցվեց դրական սպասումների նկատմամբ անորոշության բարձր մակարդակով:

Ընդ որում, ՀՀ տնտեսությունը 2020 թ. կրել է միմյանց հաջորդած երկու շուկայի՝ համավարակի և ռազմական դրության ազդեցությունները, որի հետևանքով արձանագրվել է 7.4 % տնտեսական անկում: Տնտեսական անկումն առավելապես

պայմանավորված է եղել ծառայությունների և շինարարության ոլորտների ավելացված արժեքների նվազմամբ:


Հաշվի առնելով համավարակի կառուցվածքային բնույթը՝ այն տարբերակված, ոչ հավասար ազդեցություն է ունեցել տնտեսության տարբեր ճյուղերի վրա: Համավարակի ազդեցության տեսանկյունից տնտեսության ճյուղերը տարբերակվել են ըստ ազդեցության ուժգնության և ազդեցության ուղղակիության:



Գծապատկեր 3: Տնտեսական ճյուղերի աճի դինամիկան
(ՀՀ կենտրոնական բանկ, *Ֆինանսական կայունության հաշվետվություն 2020*)

Համավարակի և հակահամավարակային միջոցառումների բացասական ազդեցությունը առավել մեծ և ուղղակի է եղել կեցության և սննդի կազմակերպման, ինչպես նաև հանգստի կազմակերպման և ծառայությունների մատուցման հետ կապված մի շարք ճյուղերում: Միևնույն ժամանակ, Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի տվյալներով տնտեսությունում եկամուտների և պահանջարկի կրճատման հետևանքով տուժել են շինարարության, մեծածախ և մանրածախ առևտրի, ինչպես նաև մշակող արդյունաբերության ճյուղերը: Տարվա ընթացքում արձանագրված բացասական զարգացումներն առավել թույլ են ազդել գյուղատնտեսության, առողջապահության և հանքագործական արդյունաբերության ճյուղերի վրա:

Ըստ ազդեցության ուժգնության՝ տնտեսության ճյուղերի տարբերակումը հիմք է տալիս առավել բացահայտ գնահատելու առանձին ոլորտի զարգացումների արտացոլումը ֆինանսական համակարգի վարկային պորտֆելի որակի վրա:




Գծապատկեր 4: Հաշվատող վարկերի կշիռը ընդհանուր վարկերում (ՀՀ կենտրոնական բանկ, Ֆինանսական կայունության հաշվետվություն 2020)

Տնտեսական առավել խոր անկում ունեցող ճյուղերին տրամադրված վարկային պորտֆելներում հիմնականում արձանագրվել է հաշվատող վարկերի տեսակարար կշռի աճ: Տնտեսության որոշ ճյուղերի վարկային պորտֆելներում հաշվատող վարկերի կշիռը շարունակվել է պահպանվել նույն մակարդակում կամ գրանցվել է փոքր նվազում: Ծյուղային տնտեսական նվազումների ոչ համամասնական արտացոլումը վարկային պորտֆելների որակի վրա հիմնականում բացատրվում է բանկերի կողմից վարկային պայմանների վերանայումով և վարկային արձակուրդներով, որոնք հնարավորություն են տվել խուսափելու մեծ ծավալով չվճարումներից՝ մեղմելով վարկային ռիսկերի նյութականացումները:

ՀՀ Կառավարության կողմից 2020 թ. մարտին հաստատվել է կորոնավիրուսի հակազդման ծրագիրը, որի շրջանակներում ներառված միջոցառումների հիմնական նպատակն է եղել ըստ ոլորտների օժանդակության տրամադրումը՝ կորոնավիրուսի տարածման հետևանքով կանխատեսվող ընթացիկ իրացվելիության հետ կապված ռիսկերի մեղմման, համավարակի պատճառով անձանց օժանդակության, սոցիալապես անապահով խմբերի սոցիալական աջակցության և սոցիալ-տնտեսական այլ հետևանքների չեզոքացման համար: Աջակցության ծրագրերը, ըստ գերակա խնդիրների հաղթահարման, տարանջատվել են երկու հիմնական՝ տնտեսական և սոցիալական հետևանքների չեզոքացման ծրագրերի, որոնց ուղղությամբ տարվա ընթացքում տրամադրված ֆինանսական ռեսուրսների ընդհանուր ծավալը կազմել է ՀՆԱ-ի 3.2%-ը: ՀՀ Կառավարության պաշտոնական կայքի համաձայն՝ ընդհանուր առմամբ իրականացվել են 22 միջոցառումների փաթեթներ, որոնք ունեցել են տնտեսական և սոցիալական հետևանքների չեզոքացման նպատակադրումներ:

Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման առաջին ծրագրի նպատակն է եղել տոկոսադրույքի սուբսիդավորումը: Շահառու են հանդիսացել ռեզիդենտ տնտեսավարողները, որոնք ունենցել են հարկային և վարկային բարվոք պատմություն: Բավարարված հայտերի մեծ մասի համար որպես օժանդակության գործիք կիրառվել է սուբսիդավորումը, որը կազմել է հայտերի 91.4%-ը կամ շուրջ 92.4 մլրդ դրամ: Օժանդակության ձևերից վերաֆինանսավորման և համաֆինանսավորման ծավալները կազմել են համապատասխանաբար 5.4 և 3.3 մլրդ դրամ (ՀՀ կենտրոնական բանկ, *Ֆինանսական կայունության հաշվետվություն 2020*):




Գծապատկեր 5: Աջակցության առաջին ծրագրի շրջանակներում վարկավորման տարատեսակները՝ ըստ կշիռների

(ՀՀ կենտրոնական բանկ, *Ֆինանսական կայունության հաշվետվություն 2020*)


Վարկային հաստատությունների կողմից ընդհանուր օժանդակության ծավալը կազմել է 101.1 մլրդ դրամ: Կապիտալի համալրման գործիքի ուղղությամբ բավարարված հայտերը փոքր կշիռ են կազմել, իսկ ֆինանսավորումը շուրջ՝ 20 մլրդ դրամ: Վարկային միջոցներն ուղղվել են հիմնականում արտադրության, առևտրի և գյուղամշակման ոլորտներ:

Ֆինանսական օժանդակության շրջանակներում առևտրի ոլորտին տրամադրվել է 40.5 մլրդ դրամ, գյուղմշակմանը՝ 5.8 մլրդ դրամ. իսկ այլ (SS, շինարարություն, տեքստիլ) ոլորտներին տրամադրված միջոցները եղել են առավելագույնը՝ կազմելով շուրջ 50 մլրդ դրամ (բավարարված հայտերի 50.2%) (ՀՀ կենտրոնական բանկ, *Ֆինանսական կայունության հաշվետվություն 2020*):



Գծապատկեր 6: Աջակցության առաջին ծրագրի շրջանակներում վարկավորման նպատակները՝ ըստ կշիռների (ՀՀ կենտրոնական բանկ, *Ֆինանսական կայունության հաշվետվություն 2020*)

Ներքին ֆինանսական շուկաներում տարվա ընթացքում ուղղորդիչ է եղել ՀՀ կենտրոնական բանկի խթանող դրամավարկային քաղաքականության ուղղությունը: ՀՀ ԿԲ-ն դրամային անհրաժեշտ իրացվելիությունը տրամադրել է հիմնական ռեպո գործիքի միջոցով՝ նպաստելով շուկայի կարճաժամկետ տոկոսադրույքների ձևավորմանը ԿԲ քաղաքականության տոկոսադրույքի շուրջ:




Գծապատկեր 7: ՀՀ Կենտրոնական բանկի հետ կնքված ռեպո համաձայնագրերը և տոկոսադրույքները

Արժույթային շուկայում զարգացումները պայմանավորվել են տնտեսական իրավիճակով: Տարվա երկրորդ և չորրորդ եռամսյակներում արտարժույթի շուկայում դրսևորվել է իրացվելիության նկատմամբ կարճաժամկետ բարձր պահանջարկ, ինչն արտահայտվել է նաև փոխարժեքի արժեզրկման ճնշումների ձևավորմամբ: Այս իրավիճակներում Կենտրոնական բանկը կիրառել է արտարժույթի սկզբի գործիք, ԱՄՆ դոլարի առքի և վաճառքի գործարքներ: Այս գործիքակազմերով ԿԲ-ն տրամադրել է արտարժույթային իրացվելիություն՝ ապահովելով ֆինանսական շուկաների բնականոն գործունեությունը (ՀՀ կենտրոնական բանկ, *Ֆինանսական կայունության հաշվետվություն 2020*):

Իրականացված միջոցառումների յուրահատուկ գնահատական կարելի է դիտարկել աշխարհի առաջատար համալսարանների և վերլուծական կենտրոնների շուրջ 300 երկրների և տարածաշրջանային փորձագետների հետ համագործակցող Bertelsmann Stiftung կոչվող կառույցի կողմից կատարված վերլուծությունները, որոնցում վերլուծվում և համեմատում են դեպի ժողովրդավարություն և ներառական շուկայական տնտեսություն վերափոխման գործընթացները ամբողջ աշխարհում: Կառույցը մասնավորապես հաշվարկել է տրանսֆորմացիայի ինդեքսը Հայաստանի համար, որը ընդգրկում է 2019 թվականի փետրվարի 1-ից մինչև 2021 թվականի հունվարի 31-ն ընկած ժամանակահատվածը: Հաշվետու ժամանակահատվածում

վճռորոշ իրադարձությունը ոչ միայն կորոնավիրուսային համավարակն էր, այլ նաև 2020 թվականի սեպտեմբերի 27-ի 44-օրյա պատերազմը Ադրբեջանի հետ: Սա լրջորեն փորձարկել է Հայաստանի քաղաքական, տնտեսական և սոցիալական դիմադրողականությունը: Նշվում է, որ այն նաև կանգնեցրել է Հայաստանում սկսված բարեփոխումների շարժումը, այդ թվում՝ քաղաքացիական ազատությունների սահմանափակման առումով, ինչը եղավ համավարակի և առավել ևս պատերազմի ժամանակ (<https://bti-project.org/en/reports/country-report/ARM>):



Գծապատկեր 8: BTI տրանսֆորմացիոն ինդեքս (BTI-ն համատեղում է տեքստի վերլուծությունը և թվային գնահատումները: Սանդղակը տատանվում է 1-ից (ամենավատ) մինչև 10 (լավագույնը):

Ընկարկելով կորոնավիրուսային համավարակի միջոցառումների համակարգը՝ կարող ենք ասել, որ այն բավական նման է ԱՄՆ-ի և Գերմանիայի կիրառած միջոցառումներին՝ ունենալով հստակ սոցիալական բնույթ: Միևնույն ժամանակ հատկացված ծախսային բյուջեն զբաղեցնում է միջինից ցածր տեղ ՅՊՀ-ի հարևանների համեմատմամբ: Իրականում բարդ է հստակ պատասխանել այն հարցին՝ արդյոք միջոցառումները հաջողված են, թե ոչ, քանի որ 2020 թ. սեպտեմբերին սկիզբ առած 44-օրյա պատերազմի հետևանքով թե՛ սոցիալ-հոգեբանական, թե՛ տնտեսական գործոնների բարելավման տեմպերը ավելի քան ընկել են: Միևնույն ժամանակ, Վիճակագրական կոմիտեն 2021 թ. փետրվարի տնտեսական ակտիվության ցուցանիշը հաշվարկել է (-5,3) տոկոս նիշով (ՅՊՀ Վիճակագրական կոմիտե (armstat.am)):

Եզրակացություն

Երկրների սոցիալ-տնտեսական զարգացման ընթացքում եղել են արտադրության խոր անկումներ, ֆինանսական ցնցումներ, գործազրկության մակարդակի աճ, սոցիալական և քաղաքական լարվածություն: Երկրները այս ցնցումները հաղթահարելու համար հսկայական ֆինանսական ռեսուրսներ են ծախսել, երբեմն նաև կարճաժամկետ որոշումներ կայացրել՝ առանց վերլուծելու հակաճգնաժամային կառավարման գործիքների արդյունավետությունը:

Ճգնաժամերի հետևանքով գլոբալ իմաստով անհրաժեշտ է լինում 4 գլխավոր խումբ խնդիրների լուծում.

1. Բանկային հատված (կայունացման վարկերի տրամադրում, տոկոսադրույքի իջեցում),

2. Դրամավարկային քաղաքականության միջոցներ (ազգային արժույթի արժեզրկում, պահուստավորման դրույքների իջեցում),

3. Պահանջարկի խթանում (աջակցություն առանձին արդյունաբերությունների, պետական փոխառությունների աճ),

4. Բնակչության բացասական սպասումների հակազդեցություն (ավանդների լրիվ երաշխիքի տրամադրում, կրթության ոլորտում ներդրումների ավելացում)

Միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքում պարզ է դառնում, որ հարկաբյուջետային քաղաքականությունը պետք է հարմարվի երկրի պայմաններին՝ հավասարակշռելով մարդկանց պաշտպանելու, պահանջարկը կայունացնելու և վերականգնմանը նպաստելու անհրաժեշտությունը: Այնտեղ, որտեղ համաճարակը շարունակում է մնալ սուր, և խիստ արգելափակումները շարունակվում են, հարկաբյուջետային քաղաքականությունը պետք է ներառի առողջապահական ծառայությունների մատուցում կյանքեր փրկելու և մարդկանց պաշտպանելու համար շտապ օգնության տրամադրումը: Այն դեպքերում, երբ սահմանափակումները թուլանում են, հարկաբյուջետային քաղաքականությունը պետք է աստիճանաբար անցում կատարի ամուր աջակցությունից տնային տնտեսություններին ուղղված առավել նպատակային աջակցության՝ հաշվի առնելով ոչ ֆորմալ տնտեսության չափը: Չբաղվածության աջակցող միջոցառումները պետք է նպաստեն աշխատանքի անվտանգ վերադարձին և դյուրացնեն աշխատաշուկաների կառուցվածքային տեղաշարժերը՝ բարելավելու հետճգնաժամային տնտեսական ճկունությունը:

ՀՀ Կենտրոնական բանկի վարած քաղաքականության շնորհիվ բանկային համակարգը պահպանել է տնտեսության վարկավորման անընդհատությունը և սահունությունը: Վարկային ռիսկերը աճել են, սակայն բանկային համակարգը կայուն է և ունակ է հավանական ռիսկերը կլանելու և տնտեսությանը վարկավորելու:

Հակաճգնաժամային կառավարման կիրառվող գործիքները ուղղված են ճգնաժամների առաջացրած տնտեսական և սոցիալական հետևանքների մեղմացմանը, ինչպես ՀՀ-ի դեպքում կառավարության ծրագրի հաստատած 22 տնտեսական և սոցիալական օգնության ծրագրերը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ կենտրոնական բանկ, *Ֆինանսական կայունության հաշվետվություն 2020*
2. ---, *Ֆինանսական կայունության հաշվետվություն 2021*
3. Корниенко, Виктор. «Государственное управление в кризисной ситуации: стратегия, приоритеты, инструменты». *Государственная служба*, 2019. Т. 21. № 3 (119), С. 32-37
4. Охотский, Евгений. «Государственное управление в кризисной ситуации». *Право и управление: XXI век*, 2014. № 2, С. 89–96.
5. Belavusau, Uladzislau and Karliuk, Maksim. "The State of Denial Amidst a Military Parade: COVID-19 in Belarus", *VerfBlog*, 2020/5/20, <https://verfassungsblog.de/the-state-of-denial-amidst-a-military-parade-covid-19-in-belarus/>, DOI: [10.17176/20200520-133705-0](https://doi.org/10.17176/20200520-133705-0)
6. Colby, Smith et al. "US Stocks Set Record High as Investors Look to New Administration", *Financial Times*, November 25, 2020. <https://www.ft.com/content/433048a5-c489-4ddd-aebdd56fb8f3edfc>
7. Janssen, Marijn, and van der Voort, Haiko. "Agile and adaptive governance in crisis response: Lessons from the COVID-19 pandemic", *International Journal of Information Management* Volume 55, December 2020.

8. Kos, Agnieszka, and Hromadskyi, Artem. "Crisis management in case of functioning of public administration units". *Globalization, the State and the Individual*, No 1 (13), 2017. pp. 39–47,
9. Maradin, Dario et al. "The Impact of the Covid-19 Pandemic on the Croatian Financial System". *Conference: 10th International Scientific Symposium Region, Entrepreneurship, Development At: Osijek, Croatia*. 2020, pp. 204-217
10. Pattyn, Valérie et al. "High-stakes crisis management in the Low Countries: Comparing government responses to COVID-19", *International Review of Administrative Sciences*, 87(3), 593-611. <https://doi.org/10.1177/0020852320972472>
11. Peterson K, Ozili, and Thankom, Arun. *Spillover of COVID-19: Impact on the Global Economy*. March 27, 2020, <https://dx.doi.org/10.2139/ssrn.3562570>
12. Tokakisa, Vassileios et al. "Crisis management in public administration: The three phases model for safety incidents". *Safety Science* 113(2):37-43, 2019
13. Singh, Dalvinder and LaBrosse, John Raymond. "Developing a Framework for Effective Financial Crisis Management", *OECD Journal: Financial Market Trends* - Volume 2011 – Issue 2
14. "5Ps of crisis management and expound on each", *Course hero*, <https://www.coursehero.com/file/p320pmvj/c-5Ps-of-crisis-management-and-expound-on-each-The-5Ps-of-crisis-management-are/>, Accessed 12.09.2019
15. "BTI 2022 Armenia Country Report", *BTI Transformation index*, https://bti-project.org/fileadmin/api/content/en/downloads/reports/country_report_2022_ARM.pdf, Accessed 2022
16. "Models & Theories to Improve Crisis Management", *Smartsheet*, <https://www.smartsheet.com/content/crisis-management-model-theories>, Accessed 20.07.2020
17. International Labor Organization. *ILO Monitor: COVID-19 and the World of Work*, 2021.
18. OECD. *The impact of the coronavirus (COVID-19) crisis on development finance*, 2020
19. International Monetary Fund. *World Economic Outlook Update, June 2020: A Crisis Like No Other, An Uncertain Recovery*, <https://www.imf.org/en/Publications/WEO/Issues/2020/06/24/WEUpdateJune2020>, Accessed June 2020
20. ---. *World Economic Outlook, October 2021: Recovery During A Pandemic*, ---, <https://www.imf.org/en/Publications/WEO/Issues/2021/10/12/world-economic-outlook-october-2021>, Accessed 04.02.2020

WORKS CITED

1. HH ktronakan bank. *Finansakan kayunut'yan hashvetvut'yun 2020* (Financial stability report 2020)
2. ---, *Finansakan kayunut'yan hashvetvut'yun 2021* (Financial stability report 2021)
3. Kornienko, Viktor. «Gosudarstvennoe upravlenie v krizisnoj situacii: strategija, priority, instrumenty». *Gosudarstvennaja sluzhba*. 2019. T. 21. № 3 (119). S. 32-37 (Kornienko, Victor, "Public Management in Crisis Situations: Strategy, Priorities and Tools". *Gosudarstvennaya sluzhba*. 2019. № 3. P. 32–37) (In Russian)
4. Ohotskij, Evgenij. «Gosudarstvennoe upravlenie v krizisnoj situacii». *Pravo i upravlenie: XXI vek*, 2014. № 2, S. 89–96.. (Ohotskiy E.V., *State Management in Crisis Situation*, 2014. N 2, p. 89-96) (In Russian)

INTERNATIONAL AND ARMENIAN EXPERIENCE OF ANTI-CRISIS MANAGEMENT MEASURES IN THE CONDITIONS OF THE CORONAVIRUS PANDEMIC

FIRDUS BAGHDASARYAN

*Armenian State University of Economics, Faculty of Economic Regulation and
International Economic Relations, Chair of Theory of Economics, Ph.D. Student
Yerevan, the Republic of Armenia*

ANAHIT GASPARYAN

*American University of Armenia, Faculty of Manoogian Simone College of Business and
Economics, Student of the "Master of Science in Economics" educational program
Yerevan, the Republic of Armenia*

The purpose of the article is to describe the use of financial instruments of anti-crisis management and their effectiveness in overcoming crisis situations based on international and Armenian experience. The objectives are as follows: to analyze the international experience of anti-crisis management, characteristics, current trends, study and evaluate the Armenian experience. Crisis management is particularly important in the context of public institutions due to the potentially overwhelming consequences (impact) of systemic crises on society as a whole.

The research used general (synthesis, verification and tracking of dynamics and trends of macroeconomic indicators) and special (comparative analysis) scientific methods.

As a result of the research carried out in the article, it was found that to overcome the coronavirus pandemic, governments have tried to respond to the crisis and control it uses various tools, despite the enormous scale and high rate of spread. Some governments have focused on gratuitous forms of financial assistance, others on reimbursable ones. Like the financial markets of the world, the reaction in the domestic markets has been extremely fast and violent. In the context of the decline of the global economy, the negative developments of the external sector have caused significant risks for the domestic macroeconomic environment of RA, which in turn has caused a high level of uncertainty regarding positive expectations. Thanks to the policy of the RA government and the Central Bank, the banking system has been able to maintain the continuity and smoothness of lending to the economy.

Keywords: *economic crisis, anti-crisis management, coronavirus pandemic, international experience, Armenian experience, monetary, fiscal and social measures.*

МЕЖДУНАРОДНЫЙ И АРМЯНСКИЙ ОПЫТ АНТИКРИЗИСНЫХ МЕРОПРИЯТИЙ ПО УПРАВЛЕНИЮ В УСЛОВИЯХ КОРОНАВИРУСНОЙ ПАНДЕМИИ

ФИРДУС БАГДАСАРЯН

*аспирант кафедры экономической теории факультета экономического
регулирования и международных экономических отношений
Армянского государственного экономического университета
г. Ереван, Республика Армения*

ԱՆԱԻՏ ԴԱՏՔԱՐՅԱՆ

*магистр образовательной программы, магистр наук
в области экономики факультета бизнеса и экономики
Симона Манукяна Американского университета Армении,
г. Ереван, Республика Армения*

Цель статьи – описать использование финансовых инструментов антикризисного управления и их эффективность в преодолении кризисных ситуаций на основе международного опыта и опыта Армении

Из поставленной цели вытекают следующие задачи: проанализировать международный опыт, особенности, современные тенденции антикризисного управления, изучить и оценить армянский опыт. Антикризисное управление особенно важно в контексте государственных институтов из-за потенциально подавляющих последствий (воздействия) системных кризисов на общество в целом.

В ходе исследования использовались общие (синтез, проверка и отслеживание динамики и тенденций макроэкономических показателей) и специальные (сравнительный анализ) научные методы.

В результате проведенных в статье исследований было установлено, что для преодоления пандемии коронавируса правительства пытались реагировать на кризис и контролировать его с помощью различных инструментов, несмотря на огромные масштабы и высокую скорость распространения вируса. Одни правительства сосредоточились на безвозмездных формах финансовой помощи, другие – на возмещаемых. Как и на финансовых рынках мира, реакция на внутренних рынках была чрезвычайно быстрой и бурной. В условиях спада мировой экономики негативные явления во внешнем секторе создали значительные риски для внутренней макроэкономической среды РА, что, в свою очередь, вызвало высокий уровень неопределенности в отношении позитивных ожиданий. Благодаря политике правительства РА и Центрального банка банковская система смогла сохранить непрерывность и бесперебойность кредитования экономики.

Ключевые слова: *экономический кризис, антикризисное управление, пандемия коронавируса, международный опыт, опыт Армении, монетарные, фискальные и социальные меры.*